Ֆինանսական կազմակերպության պատասխանատվության սահմանները

- Հաճախորդի կողմից ստացված հանձնարարականների հիման վրա կատարել համապատասխան գործարքներ Հաճախորդի հաշիվներով՝ Բանկի գործառնական օրվա ռեժիմին համապատասխան,
- ապահովել բջջային ծրագրի անխափան աշխատանքը,
- Մոբայլ-բանկինգ ծառայությունը մատուցելիս Հաճախորդին ապահովել հետևյալ հնարավորություններով՝ շուրջօրյա մուտքի հնարավորություն, տարածքային սահմանափակումների բացակայություն, բանկային գործարքների իրականացման օգտագործման պարզություն,
- պահպանել սահմանված «Գաղտնիության և անվտանգության կանոնները»,
- հաճախորդի պահանջով և վերջինիս նույնականացման հիման վրա կասեցնել կամ արգելափակել Հաճախորդի նույնականացման անունը և գաղտնաբառը,
- հաճախորդի պահանջով և վերջինիս նույնականացման հիման վրա կատարել փոփոխություններ Հաճախորդի տվյալների վերաբերյալ
- կատարել ՀՀ օրենքից, այլ իրավական ակտերից բխող իր պարտականությունները,
- Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ծրագրի օգտագործման անվտանգության և գաղտնիության պահանջների խախտման արդյունքում իր նույնականացման տվյալներն այլ անձանց կողմից օգտագործվելու հետևանքով առաջացած վնասների համար:
- Բանկը պատասխանատվություն չի կրում այն հարաբերությունների և դրանց հետևանքով ծագած պարտավորությունների համար, որոնք կարող են առաջանալ Հաճախորդի և երրորդ անձանց միջև՝ կապված Հաճախորդի կողմից երրորդ անձանց կատարված փոխանցումների հետ, բացառությամբ եթե դրանք ուղղակիորեն կապված չեն Մոբայլ-բանկինգ ծառայության մատուցման հետ:
- Բանկը պատասխանատվություն չի կրում Ինտերնետ կապի խափանման դեպքում կասեցված, չեղարկվածգործարքների, Հաճախորդի կողմից սխալ մուտքագրված հանձնարարականների, Հաճախորդի պատճառով գաղտնաբառի և նույնականացման այլ տվյալների հրապարակման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասների համար:

Սպառողի պատասխանատվության սահմանները

- հետևել ծառայությունից օգտվելու կանոններին և պայմաններին,
- խստորեն պահպանել սահմանված «Անվտանգության և գաղտնիության կանոնները»,
- Բանկին տրամադրել հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ, ինչպես նաև Բանկի հետ հեռահար (առանց Բանկ այցելելու) հաղորդակցության ցանկության դեպքում՝ հատուկ բարդ գաղտնաբառ իրեն նույնականացնելու համար և Բանկին անհապաղ տեղեկացնել վերոնշյալ տվյալների փոփոխության մասին (գաղտնաբառի բարդության աստիճանը որոշում է Հաճախորդը՝ իր ռիսկով)
- Մոբայլ-բանկինգ ծրագրով աշխատող սարքավորման կորստի կամ կողոպուտի դեպքում այդ մասին անհապաղ հայտնել Բանկին
- Մոբայլ-բանկինգ ծրագրից օգտվելու դեպքում բջջային ծրագրի խափանումների առաջացման դեպքում այդ մասին հայտնել Բանկին
- Հաճախորդը պարտավոր է Բանկին հայտնել իր նույնականացման տվյալների, այդ թվում անձը հաստատող փաստաթղթի, հասցեի, հեռախոսահամարի փոփոխության մասին
- Հաճախորդը պարտավոր է Մոբայլ-բանկինգ ծառայությունից օգտվելու համար սակագներ սահմանված լինելու դեպքում ժամանակին վճարել սահմանված սակագները
- Հաճախորդը կրում է Բանկին տրամադրված հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստի և նույնականացման այլ տվյալների ճշտության և դրանք փոխվելու դեպքում այդ մասին Բանկին չտեղեկացնելու պատասխանատվությունը: